Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԳՑ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Գեղարքունիքի մարզ–ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 44 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 2 դեպքի վարում (ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում, 7 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 21 շահառու անհատական խորհրդատվություն է տրամադրվել:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակ՝ երգ-երաժշտության, գրական, ասմունք, տեղեկատվական, ձեռագործության և ջուլհագործության, որին մասնակցել է 30 շահառու:
  Կազմակերպվել է թվով 29 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 35 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ յուրաքանչյուր ամիս նշվել են շահառուների ծննդյան տարեդարձերը, Սահմանադրության օր, էքսկուրսիաներ դեպի Օձուն, Մակարավանք, Գառնի Գեղարդ, Գիտելիքի և դպրության օր, Խաղողօրհներք, Սեւանի ցերեկային կենտրոնի հիմնադրման 21 ամյակին նվիրված միջոցառում, Անկախության օր, հանդիպում Սևանի հոգևոր հովիվ տեր Ստեփանոսի և Ճամբարակի հոգևոր հովիվ տեր Ղևոնդի հետ:
  Կազմակերպվել է մեկ շահառուի ամառային հանգիստը «Ոսկե սերունդ» ամառային ճամբարում:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 16 հանդիպում՝ ուղղված մանր մոտորիկայի զարգացմանը, խմբային ինտեգրմանը, խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ոիին մասնակցել է 26 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

- Թվով 1 շահառու օգտվել է լվացքի ծառայության տրամադրումից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Շահառուների համար կազմակերպված էքսկուրսիան դեպի Մակարավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/HixXw),
- Երգ-երաժշտության խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/lblvgg),
- Շահառուների համար կազմակերպված էքսկուրսիա դեպի Գառնի, Գեղարդ (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/zbczeu),
- Շահառուի ծննդյան տարեդարձին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/qjjxux),
- Ձեռագործության խմբակի աշխատանքները (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/TAysu):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի ծառայություն տրամադրող բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելութուն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 43/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 24 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 8 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 7 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 29 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 26 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 30 |
| 5.1 | երգ-երաժշտության | 16 |
| 5.2 | գրական | 19 |
| 5.3 | ասմունք | 12 |
| 5.4 | տեղեկատվական, | 8 |
| 5.6 | ձեռագործության և շյուղագործության | 9 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 30 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 19 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն<br>Լվացքի ծառայություն | <br>21<br>1 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե.Մխիթարյան «01» հոկտեմբեր, 2024թ